ՆԱԽԱԳԻԾ

Կ-013-01.06.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 56-րդ հոդվածի 3-րդ մասը «սեփականությանը» բառից հետո լրացնել, «ընդ որում, սույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 8.1-րդ կետով նախատեսված դեպքում հողամասն անցնում է համայնքի սեփականությանը, եթե այն հարկադիր կարգով չի օտարվել երրորդ անձանց, եւ նախկին սեփականատիրոջը հատուցվել է հողի արժեքը» բառերով:

3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիներին, իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից դրանց սեփականատերերի հրաժարվելու կամ սույն օրենսգրքի 102-րդ հոդվածով ~~ի~~ 1-8-րդ և 9-րդ կետերով սահմանված հիմքերով հողամասի նկատմամբ իրավունքը դադարելու–դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 8.1-րդ կետով սահմանված դեպքում՝ եթե հողամասն հարկադիր կարգով չի օտարվել երրորդ անձանց և նախկին սեփականատիրոջը հատուցվել է հողի արժեքը, այդ հողամասերն օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են համայնքների սեփականությանը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագծերի փաթեթում ընդգրկված Կ-013.2-01.06.2017-ՊԻՄԻ- 011/0 և Կ-0133-01.06.2017-ՊԻՄԻ-011/0 նախագծերի ընդունման անհրաժեշտությունը, կարծում ենք, որ բացակայում է, քանի որ ավելի նպատակահարմար է համապատասխան լիազորությունները լրացնել ՀՀ հողային օրենսգրքի 41-43-րդ հոդվածներում (Պետական լիազորված մարմնի իրավասությունները հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում, Մարզպետի իրավասությունը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում, Համայնքի ղեկավարի իրավասությունը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում):